

Ծիծեռնակաբերդ, 24 Ապրիլ

## ԱՊՐԻԼԻ 24՝ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Ապրիլի 24-ին՝ Մեծ Եղեռնի զոհերի հիշատակության օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը թեմակալ առաջնորդների, Մայր Աթոռի միաբանների եւ բարերար հայորդիների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր հայ նահատակների անմահ հիշատակին:

Հուշահամալիրում Ամենայն Հայոց Հայրապետը եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակներ զետեղեցին, ապա անմար կրակի մոտ Նորին Սրբության նախագահությամբ եւ ներկայությամբ ՀՀ Նախագահի եւ հայոց պետական ավագանիի կատարվեց հոգեհանգստյան արարողություն Հայոց ցեղասպանության զոհերի լույս հոգիների հանգստության համար:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, որ սրբազան արարողության ընթացքում անդրադարձավ օրվա խորհրդին:

Այնուհետեւ Մայր Տաճարի հարեւանությամբ գտնվող Նահապակաց հուշարձանի՝ Աղոթքի եւ ուխտի խաչքարի մոտ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Սրբազան արարողություններին մասնակցեցին նաեւ Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արքեպիսկոպոս Գուջերոտտին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարներ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Սիրիայից եւ Քուվեյթից: